МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

THE MINISTRY OF EDUCATION, SCIENCE, CULTURE AND SPORT REPUBLIC OF ARMENIA
YEREVAN STATE UNIVERSITY

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ.Հ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian st., Yerevan, 0025, Republic of Armenia
(+374 10) 55-47-52, (+374 10) 55-46-41 (Fax), info@ysu.am, www.ysu.am

**ք. Երևան** **06.12.2024թ.**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
## «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/82»

***(գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին)***

## ՊԱՐԶԵՑ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կողմից 2024 թվականի մայիսի 23-ին տեղեկագրում (www.gnumner.am) հրապարակարակվել է սարքերի ձեռքբերման «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/82» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ): Ի թիվս այլ մասնակիցների Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացվել նաև «ՇԵՆ ԴԵԿՈՐ» ՍՊ ընկերության կողմից (ՀՎՀՀ՝ 01310118, նախկին անվանումը՝ «ՇԻՆԱՐԱՐ-ԱԳՐՈ» ՍՊԸ, այսուհետ՝ Ընկերություն):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2024 թվականի հունիսի 24-ի 3-րդ նիստի արձանագրության 8-րդ կետով Ընկերությունն Ընթացակարգի հրավերի 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից, իսկ 2024 թվականի հուլիսի 17-ին ԵՊՀ և Ընկերության միջև կնքվել է «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/82-1» ծածկագրով պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Կնքված Պայմանագրի մատակարարման ժամանակացույցի և լրացուցիչ համաձայնագրի համաձայն Ընկերությունը պարտավորվել է Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված առավելագույնը 120 օրացուցային օրվա ընթացքում (մինչև 2024 թվականի նոյեմբերի 14-ը) մատակարարում իրականացնել, սակայն Պայմանագրով նախատեսված գնման առարկաների մատակարարումը մինչ օրս չի իրականացվել:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն «գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել

պայմանագիրը», իսկ 2.1.7.1 կետի բ) ենթակետի համաձայն «վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի»:

Վերոնշյալ հանգամանքների լույսի ներքո՝ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.1 կետի և «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի պահանջները, ԵՊՀ-ն որոշել է պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու հիմքով Պայմանագիրը բոլոր չափաբաժինների մասով ամբողջությամբ միակողմանի լուծել:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը.

**ՈՐՈՇԵՑ**

Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով՝ սույն որոշումը կայացվելուն օրվան հաջորդող օրն այն տրամադրել լիազորված մարմնին և մասնակցին:

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐԻ**
**ԳԾՈՎ ՊՐՈՌԵԿՏՈՐ** **Ա. Գ. ՄԱԼԽԱՍՅԱՆ**